

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՀԱՅԵՐԵՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՐԵՔՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻ ԵՎ ԲՈՒԽԱՐԵՍՏՈՒՄ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆԸ

Բուխարեստում Հայոց Առաջնորդարանի ընդարձակ նոր շենքում կազմակերպվել է տալ Եկեղեցական արվեստի թանգարան։ Թեմական խորհուրդը այդ նպատակով դիմել է Բուխարեստում կրոնական պաշտամունքի պետական գերատեսչությանը, որն իր համաձայնություն տալուց բացի, բարոյական և նյութական աջակցություն է ընձեռել Թեմական խորհրդին՝ այդ կարևոր գործը հաջողությամբ գլուխ բերելու համար։

Այնուհետև՝ առաջնորդ գեր. Տ. Տիրայր եպիսկոպոսի գլխավորությամբ, Թեմական խորհուրդը անցել է աշխատանքի և, հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ, կարողացել է գլուխ բերել այդ շատ կարևոր գործը։ Այսպիսով՝ Բուխարեստում հիմնադրվել է հայոց թեմի եկեղեցական թանգարանը, որտեղ ցուցադրվում են հայ եկեղեցական արվեստի ընտիր ցուցանմուշներ՝ վարագույրներ, պաշտամունքի սրբազան իրեր, ձեռագրեր, հնատիպ գրքեր, պատմական արժեք ներկայացնող բազմաթիվ արխիվային նյութեր և նկարներ։

Թանգարանի բացման հանդիսավոր արարողությունը կատարվել է հունիսի 30-ին, Ս. Սահակ և Ս. Մեսրոպ մեծ Լուսավորիչների տոնի օրը։ Հանդիսության ներկա է եղել Ռումին Օրթոդոքս եկեղեցու սրբազան պատրիարքի փոխանորդ գեր. Տ. Վիսարիոն եպիսկոպոսը։ Հանդիսության ներկա է եղել նաև Կրոնական պաշտամունքների պետական գերատեսչության քարտուղար Նենչուն։ Հանդիսության մասնակցել են նաև Բուլղար օրթոդոքս, կաթոլիկ եկեղեցիների, ավետարանական և հրեական համայնքների, ինչպես նաև՝ Ռումին Աստվածաբանական ինստիտուտի, Բուխարեստի մի շարք թանգարանների ներկայացուցիչներ և բազմաթիվ հրավիրյալներ։

Հանդիսության բացումը կատարել է առաջնորդ Տ. Տիրայր եպիսկոպոս Մարտիկյանը։ Թեմական խորհրդի փոխ-նախագահ դոկտ. Գր. Բամբուկչյանը ընթերցել է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի այս առթիվ ուղարկած շնորհավորական հետևյալ հեռագիրը.

«Սրտանց հղում ենք Մեր օրհնությունը առաջնորդարանիդ՝ թանգարանի բացման սուրբիվ։ Թող Աստված օգնական լինի Ձեզ և հաջողությամբ սլաստկի Ձեր եկեղեցաշեն բոլոր գործերը։ Թող Աստված Իր հովանու ներքո պահպանի Ձեր Թեմը և հավատացյալ Մեր զավակները։ Թող Աստված խաղաղության ու բարության մեջ ծաղկյալ պահի Ռումեն ազնիվ ժողովուրդն ու նրա սքանչելի երկիրը»։

Այնուհետև՝ հայ եկեղեցական արվեստի նշանակության և արժեքի մասին գիտական լուրջ դասախոսությամբ հանդես է եկել պրոֆ Դ. Ի. Շտեֆրնեսկուն։

Թանղարանի կազմավորման աշխատանքներին իրենց թանկագին աջակցությունն են բերել Հ. Ռ. Սիրունին, Դ. Ի. Շտեֆրնեսկուն և տիկին Գորինա Նիկուլեսկուն։

Թեմական խորհուրդը թանգարանում կազմակերպել է մի շարք դասախոսություններ՝ հայ մշակույթի և հայ եկեղեցական արվեստի և նորակազմ թանղարանի ցուցանմուշների մասին։ Այդ դասախոսությունները կարդացել են հայ և ռումին մասնագետները։

Բուխարեստում Հայոց թեմի եկեղեցական թանգարանի բացման հանդիսությունը

Բանախոսությունների շարքը բացել է ռումինահայ ծանոթ մտավորական և վաստակավոր պատմաբան-բանասեր Հ. Ճ. Սիրունին, դասախոսելով հունիսի 3-ին հայերեն Աստվածաշնչի առաջին տպագրության 300-ամյակի մասին։ Հանդիսության ընթացքում խոսել է նաև թեմական առաջնորդ Տ. Տիրայր եպիսկոպոսը, շեշտելով՝ հայերեն Աստվածաշնչի առաջին տպագրության պատմական մեծ նշանակությունը հայ մշակույթի համար։